

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ծաղկաբեր համայնքի ավագանու արտահերթ նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների) վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ծաղկաբեր	Ավագանու արտահերթ նիստ	03.03.2020թ.	10:00	Ծաղկաբերի համայնքապետարան (գ.Ծաղկաբեր, 2 փողոց, 12 շենք)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ծաղկաբեր համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 03-ի արտահերթ նիստի օրակարգը

Օրակարգ

1. Ծաղկաբեր համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի մասին

Զեկ. Ն. Հովհաննիսյան

2. Ծաղկաբեր համայնքի սեփականություն հանդիսացող 06-049-0031-0001 ծածկագրով հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու մասին

Զեկ. Ն. Հովհաննիսյան

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

Զեկ. Ն. Հովհաննիսյան

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ծաղկաբեր համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու **2017 թվականի հունիսի 15-ի** «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ **14-Ա** որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի գոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո **10-օրյա** ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի ավագանու
2020 թվականի **մարտի 3**--ի N 8-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Մխիթարյան Արթուր Մահմուդի-----10000 /տաս հազար դրամ/երեխայի ծննդյան գումար/
2. Բորջյան Մելինե Մուսաելի-----50000/ հիսուն հազար դրամ/ու. վարձ
3. Պետրոսյան Բարկեն Գագիկի-----50000/ հիսուն հազար դրամ/ու. վարձ/

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 110000 / մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ: